



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

ԱՌԵՏԱԲԵՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՅ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՔ. — (Ապրիլի 2.)



ախիջեւանու քովի Փոքր Սալա
գիւղին հասարակութիւնը, նոր
երէցփոխան ընտրած էր իրենց
եկեղեցւոյն զՊարոն Պետրոս Թո-
փալով, իտեղի Պ. Պօղոսի Պա-
րոնովին, բայց որովհետեւ այդ
ընտրութիւնը ըստ օրինաց չէր,
ուստի եւ ընդունելի չեղեւ Ա-
ռաջնորդական Ատենիս:

Ապրիլի 6. — Եւպատորիոյ ժողովրդականը
խնդիր տուած էին Ատենիս՝ որ իրենց քա-

հանայն հովուէ եւ զժողովուրդն հայադաւան
որ իՊահճէսարայ, իմէջ բերելով զվաղնջուց
սովորութիւնն: Ատենան վասն զանազան խոր-
հրդածութեանց՝ պատշաճ համարեցաւ պա-
հել այժմու կարգադրութիւնն անփոփոխ,
այսինքն թողլով առ աւագ քահանայն Սիմ-
ֆերովիլի՝ Պահճէսարայի հովուութիւնն:

Ապրիլի 9. — Յրպաղարի երէցփոխանն Պ.
Գրիգոր Մանուկեան Սաղըռեանց հրաժար-
ման խնդիր էր տուած Ատենիս, որ եւ ըն-
դունեցաւ նորա հրաժեշտը, առաջարկելով

Հասարակութեան քաղաքին որ ուրիշ երէց-
փոխանի մը ընտրութիւնն ընեն, եւ առա-
ջարկեն Ատենիս ի Հաստատութիւն:

— Գրիգորուպօլսոյ Հոգեւոր Կառավարու-
թիւնը խնդրած էր Ատենէս որ Գրիգորու-
պօլիս գտնուած եկեղեցային պանդոկն ու
վեց կրպակները վեցամեայ ժամանակաւ վար-
ձու տրուի Պարոն Դուկասու Քասապեան: Ա-
ռաջնորդական Ատենս յետ պատշաճաւոր
քննութեանց՝ Հաստատեց Հոգեւոր Կառավա-
րութեան վերոյիշեալ առաջարկութիւնը:

— Նախիջեւանու Թօփտի գեղջ Հասարա-
կութիւնը միաբան հաւանութեամբ խնդրած
էին որ վերստին Հաստատուի երէցփոխա-
նութեան պաշտօնին մէջ Պարոն Մանուէլն
Թորոսեան, որոյ երեք տարուան ժամանակը
լցուած էր: Առաջնորդական Ատենս ըստ
1026 յօդուածոյ Բարձրագոյն կարգադրու-
թեանն՝ կատարեց վերոյիշեալ Հասարակու-
թեան խնդիրը, Հաստատելով այլ եւս ժա-
մանակաւ զՊարոն Մանուէլն Թորոսեան ի
պաշտաման անդ իւրում:

Ապրիլի 13. — Առաջնորդական Ատենս
Հրաման տուաւ Նախիջեւանու Հոգեւորական
Կառավարութեանը որ եկեղեցական մոմա-
վաճառութեան կապալառութիւնը տայ ցան-
կացողաց եռամեայ ժամանակաւ, փոխանակ

Պ. Աստուածատրոյ Աստուածատրեան, որոյ
պայմանեալ եռամեայ ժամանակը լրացած
էր արդէն:

Ապրիլի 27. — Առաջնորդական Ատենս
ըստ խնդրանաց Հոգեւորական Կառավարու-
թեանն Քիշնեւի՝ թոյլ տուաւ որ խախտեալ
եկեղեցւոյն կարկատմանն համար բարեպաշտ
Ժողովրդականք ողորմութիւն ժողովեն ժա-
պաւինեալ տետրակի մէջ նշանակելով իրենց
տուած տուրքը ի վառս տանն Աստուծոյ:

— Ըստ Հաղորդագրութեան Առաջնորդա-
կան Ատենին Երեւանայ, որով կճանուցանէր
զի վարդանլի գեղջ Յարութիւն քահանայն
Զոհրաբեանց առած միամեայ անցագրին ժա-
մանակէն աւելի ուշացեր էր դառնալու իւր
ծուխը, եւ ուրիշ տեղուանք կքալէր Ժողո-
վարարութեամբ. Ատենս Հրաման ըրաւ
Հոգեւորական Կառավարութեանց եւ քահա-
նայից Վիճակիս որ վերոյիշեալ քահանայն
եթէ Վիճակիս մէջ յայանուի՝ օրինաց սահ-
մանածը կատարեն:

— Հին Խրիմու Խաչատուր քահանայն Սա-
մուէլեանց գտնուելով ի վիճակի աղքատու-
թեան, Ատենս Հրաման ըրաւ որ յարդեանց
անտի վանաց Ս. Խաչին ամիս յամսոյ տրուի
թոշակ վերոյիշեալ քահանային 10 բուպլի,
կամ թէ տարին 120 բ. արծաթի:

ԵՐԿՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՔ.

Ինչո՞ւ համար մարդս իւր ընկերը միշտ պակասաւոր կտեսնէ, եւ ինքզինքը՝ ոչ.

— Վասն զի մարդս իւր պակասութիւնը չտեսներ, բայց ուրիշինը կրկին կերպով կտեսնէ:

Ինչո՞ւ համար մարդս ինքզինք թշուառ կգտնէ եւ զուրիշը իրմէ երջանիկ.

— Վասն զի մարդս իւր թշուառութիւնը կրկին կտեսնէ, եւ ուրիշինը՝ ոչ:

Այս երկու պատասխանները ըստ ինքեան իրարու հակառակ կերեւին, բայց եւ այնպէս՝
երկուսն ալ անփոխաւի ճշմարտութիւններ են:

* * *